

† † † **HOKEHANKISD** † † †

YEFKINE KARIAN

(7 Day)

Requested by: Der Hayr and Board of Trustees
Vivian Chakarian
Janet Chakarian
Grace Chakarian Paltrineri
Knar Ozutucuyan



CHURCH ATTENDANCE PROCEDURE:

- You **MUST** call and **RESERVE** your seat by the Saturday **BEFORE** Sunday's service.
- You **MUST** wear a **MASK** when you are on church property at **ALL** times.
- Upon entrance into the church foyer you **MUST** sign in and follow COVID-19 protocols.



2020 Membership Dues – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. The membership fees are \$150.00 for adults and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible.




2020 FEASTS

December 26 Saint Stephen the Protomartyr
December 28 Saints Peter and Saint Paul



Ս. ԽԱՉ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH

☞ **SUNDAY, DECEMBER 27, 2020** ☛



ՉԱՅՆ ԲԿ

ՅԻՍՆԱԿԻ Զ. ԿԻՐԱԿԻ

SIXTH SUNDAY OF ADVENT

This Sunday's service will be open to the public, with limited seating, according to COVID-19 guidelines.

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 A.M. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church

4906 Flint Drive, Bethesda, MD 20816

Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.

Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393

E-mail: soorpkhatch@verizon.net

Website: www.soorpkhatch.org

Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor

Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

----- (19 . 11 – 28) -----

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով որ ժողովուրդը կը կարծէ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց.

- Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախ քան մեկնիլը, կանչեց իր ծառաներէն տասը հոգի եւ իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ տուաւ եւ ըսաւ. «Շահարկեցէ՛ք այս դրամը, մինչեւ վերադարձս»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին գինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Չէ՛նք ուզեր որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»:

Երբ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալով համար թէ ինչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրիս, բարի՛ ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, գայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ որ քուկը չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»: Տէրը ըսաւ անոր. «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր որ խիստ մարդ մըն եմ, կ'առնեմ ինչ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած, ինչո՞ւ դրամս շահարկողներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս գայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէք տուէք անոր՝ որ տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք», - ըսաւ ան, - «ունեցողին

աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք»:

Այս խօսքը ըսելէ ետք Յիսուս շարունակեց իր ճամբան դէպի Երուսաղէմ:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՔՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

----- (7 . 20 - 25) -----

Աւելին, այս նոր քահանայութիւնը երդումով տրուեցաւ, մինչդեռ միւսներուն քահանայութիւնը երդումով տրուած չէ: Քրիստոս քահանայ եղաւ Աստուծոյ երդումով, ինչպէս սահմոսագիրը կ'ըսէ.

«Տէրը անդառնայի երդում քրաւ, ըսելով.-
Դուն յախտեան քահանայ ես. Սերքիսեղեկին պէս»:

Եւ այսպէս, Յիսուս գերագանց ուխտի մը երաշխաւորը եղաւ: Ի վերջոյ, միւս քահանաները թիւով շատ կ'ըլլային, որպէսզի մէկուն կամ միւսին մահով քահանայութիւնը չընդհատուէր: Բայց որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր քահանայութիւնն ալ անվախճան է: Ուստի նաեւ կրնայ վերջնականապէս փրկել անոնք որոնք իր միջոցաւ Աստուծոյ կու գան, որովհետեւ միշտ կենդանի ըլլալով՝ տեւաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար:

 SCRIPTURE READINGS 
HEBREWS 7:20-25

And it was not without an oath! Others became priests without any oath, but he became a priest with an oath when God said to him: "The Lord has sworn and will not change his mind: You are a priest forever." Because of this oath, Jesus has become the guarantee of a better covenant. Now there have been many of those priests, since death prevented them from continuing in office; but because Jesus lives forever, he has a permanent priesthood. Therefore he is able to save completely those who come to God through him, because he always lives to intercede for them.

LUKE 19:11-28

While they were listening to this, he went on to tell them a parable, because he was near Jerusalem and the people thought that the kingdom of God was going to appear at once. He said:

"A man of noble birth went to a distant country to have himself appointed king and then to return. So he called ten of his servants and gave them ten minas. 'Put this money to work,' he said, 'until I come back.' "But his subjects hated him and sent a delegation after him to say, 'We don't want this man to be our king.' "He was made king, however, and returned home. Then he sent for the servants to whom he had given the money, in order to find out what they had gained with it. "The first one came and said, 'Sir, your mina has earned ten more.' "Well done, my good servant!" his master replied. 'Because you have been trustworthy in a very small matter, take charge of ten cities.' "The second came and said, 'Sir, your mina has earned five more.' "His master answered, 'You take charge of five cities.' "Then another servant came and said, 'Sir, here is your mina; I have kept it laid away in a piece of cloth. I was afraid of you, because you are a hard man. You take out what you did not put in and reap what you did not sow.' "His master replied, 'I will judge you by your own words, you wicked servant! You knew, did you, that I am a hard man, taking out what I did not put in, and reaping what I did not sow? Why then didn't you put my money on deposit, so that when I came back, I could have collected it with interest?' "Then he said to those standing by, 'Take his mina away from him and give it to the one who has ten minas.' "Sir,' they said, 'he already has ten!' "He replied, 'I tell you that to everyone who has, more will be given, but as for the one who has nothing, even what he has will be taken away. But those enemies of mine who did not want me to be king over them--bring them here and kill them in front of me.'"

After Jesus had said this, he went on ahead, going up to Jerusalem.

✠ ☩

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Ս. Ստեփանոս առաջին վկան է, որ նահատակուեցաւ Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդին դաւանելուն համար: Ան Յիսուսի 72 աշակերտներէն մէկն էր, որ ուրիշ 6 հոգիներու հետ Նախնական Եկեղեցիին կողմէ (Պետրոս առաքեալի առաջնորդութեամբ) կարգուեցաւ եկեղեցոյ սեղանին սարկաւազ:

Նոր Կտակարանի «Առաքեալներու Գործերը» գիրքին Թ-րդ գլխուն մէջ կը կարդանք եօթը սարկաւազներուն նշանակուելուն եւ Ստեփանոսի ձերբակալութեան մասին, իսկ 7-րդ գլխուն մէջ՝ իր վկայութեան եւ քարկոծումին մանրամասնութիւններուն մասին: Իր քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօղոսն էր, որ հետագային եղաւ Պօղոս առաքեալ:

Saturday, December 26, is the feast day of St. Stephen the Protomartyr, who was tried by the high priests for blasphemy against Moses and God and speaking against the Temple and the Law. He was stoned to death by an infuriated mob encouraged by Saul of Tarsus, the future Saint Paul. After Christ’s ascension, the apostles went about spreading the Word. It soon became apparent that more people were needed to serve the growing church community. Seven worthy individuals were called upon to serve the Holy Altar and called “deacons” (*sarkavag*). The most noteworthy of the seven was Stephen, described as a “man full of faith and the Holy Spirit” (Acts 6:5). The Feast of St. Stephen is a popular and important commemoration in the Armenian Church. It is also a day to honor all deacons of the church. St. Stephen became the first martyr of the Christian church and is therefore called the “proto-martyr.”

✠ ☩

On the occasion of St. Stephen (Saturday, December 26), the First Deacon and Protomartyr of the Chrisitan Church, Der Hayr and the Board of Trustees congratulate all those who serve Soorp Khatch and all who are named Stepan, Stepanos, Stephen, Steven, and Panos, and wish them good health and happiness.

✠ ☩

Also on the occasion of St. Peter and St. Paul (Monday, December 28), Der Hayr and the Board of Trustees congratulate all those who are named, Boghos, Bedros, Peter and Paul, and wish them good health and happiness.



Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Ց
Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 2021

Ա Մ Ա Ն Ո Ր Ի Պ Ա Տ Ա Ր Ա Գ

Ուրբաթ, 1 Յունուար, 2021.....1:00-ին

Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց

Երեքշաբթի, 5 Յունուար, 2021

Երեկոյեան Ժամերգութիւն.....6:00-ին

Ս. Պատարագ.....7:30-ին

Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Չորեքշաբթի, 6 Յունուար, 2021

Առաւօտեան Ժամերգութիւն.....10:00-ին

Ս. Պատարագ.....10:30-ին

Ջրօրհնէք12:30-ին



ՅԻՄՆԱԿ / HISNAG / ADVENT

«Յիսնակ»ը յիսուն օրերու միջոց մըն է, որուն կը յաջորդէ Աստուածայայտնութեան տօնը: Ժամանակին, Մեծ Պահքի նման պարտադրուած պահք էր՝ 50 օրերու տեւողութեամբ, բայց այժմ վերածուած է երեք շաբաթապահքերու: Առաջին շաբաթը կը կոչուի «Յիսնակաց Պահք», երկրորդը, որ ձմեռնամուտի պահքն է, կը կոչուի «Ս. Յակոբի Պահք» եւ երրորդը, վերջին շաբաթը՝ «Ս. Ծննդեան Պահք»:

Յունուար 6-էն ետ հաշուելով 50 օր, կը յանգինք Նոյեմբեր 18-ին. անոր մօտիկ Կիրակին ալ կ'ըլլայ Յիսնակի Բարեկենդանը:



CALENDAR FOR
ARMENIAN CHRISTMAS AND EPIPHANY

JANUARY 2021

NEW YEAR'S BADARAK

Friday, January 1, 2021..... 1:00 p.m.

ARMENIAN CHRISTMAS EVE

Tuesday, January 5, 2021

Evening Service.....6:00 p.m.

Divine Liturgy7:30 p.m.

ARMENIAN CHRISTMAS & EPIPHANY

Wednesday, January 6, 2021

Morning Hour Service.....10:00 a.m.

Divine Liturgy.....10:30 a.m.

Blessing of the Water.....12:30 p.m.



This is a period of fifty days, which precedes Theophany, and formerly, as Great Lent, constituted a period of total fasting. At present, aside from the usual Wednesday and Friday fasts, it consists of fasting for three weeks: the first week under the designation, *Hisnagatz Bahk* (Quinquagesima or Advent); the second week, the fast of the arrival of the winter, is known as the Fast of St. James; and the last week, the Christmas fast.

Counting backwards fifty days from January 6 brings us to November 18, the nearest Sunday being *Hisnagatz Paregentan* which with an immovability of seven days, may fall on any day between November 15 and 21.



ԹԻ ԻՆՉՊԷՍ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՅԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Հայ Եկեղեցին կը տօնախմբէ ու կը պանծացնէ յիշատակը Քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցւոյ սուրբերէն՝ Քրիստոսի տասներկու առաքեալներուն, որոնք բոլորն ալ նահատակուած են քարոզչութեան ընթացքին:

1. Ս. ՄԱՏԹԻՈՍ ԱՌԱՔԵԱԼ


Մատթէոս կը նշանակէ «Պարգեւ»: Կափառնայումէն էր եւ արհեստով՝ մաքսաւոր: Հրէական անունն էր Ղուի կամ Լեւի: Քարոզած է Պաղեստինի Ափրիկէի մէջ: Ենթարկուած է մեծ չարչարանքներու եւ նահատակուած սուրով՝ Եթովպիոյ մէջ:

2. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼ

Առաքեալներէն ամենակրտսերն է: Իրեն եւ եղբօրը՝ Յակոբոս առաքեալին Յիսուս անուանած է «Որոտման որդիներ»՝ իրենց ըմբոստ նկարագրին համար: Որդին էր Ջերեղէոսի եւ Սալոմէի: Եղած է ձկնորս: Քարոզած է Փոքր Ասիոյ եւ Եփեսոսի մէջ: Մահուան դատապարտուելով, եռացած ջուրով եւ ձեթով լեցուն կաթսայի մէջ կը նետուի, սակայն հրաշքով կը փրկուի եւ Պաթմոս կղզին կ'աքսորուի: Հոն կը գրէ իր Յայտնութեան Գիրքը: Հետագային բանտէն ազատ արձակուելով, բնական մահով, խոր ծերութեան մէջ կը վախճանի:

3. Ս. ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ջերեղիոսի որդին, Յովհաննէս առաքեալի եղբայրը, կոչուած է նաեւ Աւագ կամ Երէց՝ ի տարբերութիւն միւս՝ Յակոբոս Կրտսեր առաքեալի: Արհեստով ձկնորս էր: Որպէս գորաւոր եւ եկեղեցւոյ հեղինակաւոր առաջնորդ՝ Յակոբոս կը գլխատուի Երուսաղէմի մէջ, Հերովդէս արքայի հրամանով:



HOW THE APOSTLES OF CHRIST WERE MARTYRED

The Armenian Church celebrates and glorifies the memory of the saints of the Christian Universal Church, the twelve apostles of Christ, all of whom were martyred during the preaching.

1. ST. MATTHEW THE APOSTLE

Matthew means "Gift". He was from Capernaum and was a customs officer by trade. The Jewish name was Jui or Levi. Preached in Palestinian Africa. He was subjected to great torment and died by a sword in Ethiopia.

2. ST. JOHN THE APOSTLE

He is the youngest of the apostles. Jesus called his half brother, the apostle James, "sons of thunder" for their rebellious description. He was the son of Jebedee and Salome. He was a fisherman. Preached in Asia Minor and Ephesus. Sentenced to death, he was thrown into a cauldron full of boiling water and oil, but miraculously escaped and was exiled to the island of Patmos, where he wrote his Book of Revelation. He was later released from prison and died a natural death of old age.

3. JAMES THE APOSTLE

The son of Zebedius, the brother of the apostle John, is also called Senior or Elder, in contrast to the other apostle James the Junior. He was a fisherman by profession. As a powerful and authoritative church leader, James was beheaded in Jerusalem by order of King Herod.

4. Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ճանչցուած է նաեւ Նաթանայէլ անունով: Ան գալիլեայի Կանա քաղաքէն էր Եղած է Փոքր Ասիոյ երկիրներու առաքեալ: Քարոզած է Պարսկաստանի եւ Հայաստանի մէջ: Թաղէոս առաքեալի հետ կը համարուի Հայ Եկեղեցւոյ հիմնադիրը: Մորթագերծ ըլլալով նահատակուած է Սանատրուկ արքայի կողմէ:

5. Ս. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Պետրոս յունարէն կը նշանակէ վէմ: Թլփատութեան անունը Շմաւոն է, որ յունական ձեւով կ'ըլլայ Սիմոն կամ Սիմէոն: Յովնանի որդին էր եւ Անդրէաս առաքեալի եղբայրը: Յիսուս գինք «Կեփաս» անուանած է, որ արամերէն կը նշանակէ վեմ, ժայռ: Եղած է ձկնորս եւ քարոզած է Յուդայի, Անտիոքի եւ Հռոմի մէջ: Գլխիվայր խաչուելով կը նահատակուած է Հռոմի մէջ: Ըստ եկեղեցական աւանդութեան, գինք չարչարողներէն կը խնդրէ գլխիվայր խաչել, որովհետեւ ինքզինք անարժան կը նկատէ Քրիստոսի խաչելու ձեւով նահատակուելու:

6. Ս. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Կը համարուի Քրիստոսի 13-րդ առաքեալը. Կիլիկիոյ Տարսոն քաղաքէն էր եւ Հռոմի քաղաքացի: Հրէական անունն էր Սաւուղ, յունականը՝ Սօղոս: քարոզած է Դամակոսի, Անտիոքի, Երուսաղէմի, Կիպրոսի, Պամփիլիայի, Լիւստրայի, Փռուզիայի, Յունաստանի, Հռոմի եւ այլ տեղեր: Աւանդութեան համաձայն, Հռոմի մէջ սոսկալի հալածանքներու եւ չարչարանքներու ենթարկուելէ ետք, քրիստոնեաները հալածող Ներոն կայսեր կողմէ սուրով գլխատուած է Ք.Ե. 67 թուականին: Պօղոս առաքեալ համբերութեամբ տարած է ամէն տեսակի զրկանք ու բանտարկութիւն: Բանտարկութեան երկար տարիները առիթ եղած են, որ հռոմէական զանազան քաղաքներու մէջ իր հաստատած քրիստոնեայ համայնքներուն եւ եկեղեցիներուն համար, զրի առնէ առաքելական իր նամակներուն մեծ մասը, որոնք քրիստոնէական վարդապետութեան կարեւոր ուսուցումներ եւ յորդորներ են ու կը կազմեն Նոր Կտակարանի կարեւոր մէկ բաժինը:

Շարունակելի...

4. APOSTLE BARTOGHIMEOS

Also known as Nathaniel. He was from Cana in Galilee. He was an apostle to Asia Minor. Preached in Persia and Armenia. Together with the apostle Thaddeus, he is considered the founder of the Armenian Church. Being skinless, he was martyred by King Sanatruk.

5. PETER THE APOSTLE

Peter in Greek means rock. His given name when he was circumcised is Simeon, which in Greek means Simon or Simeon. He was the son of Jonah and the brother of the apostle Andrew. Jesus called him "Cephas", which means rock. He was a fisherman and preached in Judah, Antioch, and Rome. He was crucified and martyred in Rome. According to church tradition, he asked his tormentors to crucify him upside down because he considered himself unworthy to be martyred in the way Christ was crucified

6. PAUL THE APOSTLE

He is considered the 13th apostle of Christ . He was from the city of Tarsus in Cilicia and a citizen of Rome. The Jewish and Greek name was Saul. He preached in Damascus, Antioch, Jerusalem, Cyprus, Pampulia, Lystra, Phrygia, Greece, Rome, and elsewhere. According to legend, after being horribly persecuted and tortured in Rome, Nero, who persecuted Christians, was beheaded with a sword by the emperor. In the year 67. The apostle Paul patiently endured all kinds of deprivation and imprisonment. His many years of imprisonment led him to take most of his apostolic letters to the Christian communities and churches he had established in various Roman cities, which are important teachings and exhortations of Christian doctrine and form an important part of the New Testament.

To be continued...

Ա Ղ Օ Թ Ք

Պահպանիչ եւ յոյս բոլոր հաւատացեալներուն՝ Քրիստոս Աստուած մեր, Հայաստանեայց առաքելական Սուրբ Եկեղեցին անսասան պահէ, եւ հաւա-տացեալներուն մէջ աստուածգիտութեանդ լոյսն ու սերը բորբոքէ: Հայաս-տանի եւ Արցախի հանրապետութիւններն ու Հայոց բանակը ամրացուր, եւ Հայ ազգի միասնակամութիւնը անխախտ պահէ: Օրհնէ՛ համայն հաւատաց-եալ ժողովուրդը թու սուրբ Խաչիդ ամենակարող զօրութեամբը: Փրկէ, ազա-տէ, երեւելի եւ աներեւոյթ ամէն տեսակ թշնամիներէ ու փորձութիւններէ, եւ մանաւանդ պսակածէ Ժահրի սպառնալիքէն: Նահատակներու հոգիները երկնքի արքայութեանդ արժանացուր եւ անոնց պարագաները Քու Սուրբ Հոգիովդ մխիթարէ: Գերիները իրենց կապանքներէն ազատէ, եւ գաղթա-կաններուն տուն դարձը ապահովէ: Մարմնով, մտքով, սրտով ու հոգիով վիրաւորեալներուն բժշկութիւն պարգեւէ եւ արժանի ըրէ մեզ՝ գոհութեամբ փառաւորելու Ամենասուրբ Երրորդութիւնդ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

A PRAYR

May God, the preserver and hope of all believers, keep the covenant of the unity of the Armenian people inviolable, keep the Armenian Apostolic Holy Church unshakable and inflame theology and love in the believers, strengthen the nations of Armenia and Artsakh and the Armenian army. Under the umbrella of your cross. Save, deliver, from all visible and invisible enemies and temptations. Make the souls of the martyrs worthy of the kingdom of heaven and comfort them with Your Holy Spirit. Calm the hearts of the relatives of the missing, make the captives safe, ensure the return of the refugees, and heal the wounded physically, mentally, emotionally and spiritually. Make us worthy to glorify the Most Holy Trinity with gratitude. Now and always and forever and ever. Amen: